

ԱՐՏԱԿԱԳ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

Արտակարգ դատարանը դա պետության հատուկ պատժիչ մարմին է, որն ստեղծվում է արտակարգ իրադրությունների ժամանակ (պատերազմի, պետական հեղաշրջման և այլ դեպքերում): Արտակարգ դատարանները, ըստ էության, դատարաններ չեն, որովհետև սովորաբար ստեղծվում են պետության դատական համակարգից դուրս և իրականացնում են ոչ թե արդարադատություն, այլ բռնազավթում են դատական իշխանությունը: Հիմնականում արտակարգ դատարանի միջոցով գործի քննությունն գաղտնի է ընթանում, իսկ վերջինիս կայացրած որոշումները բողոքարկման ենթակա չեն:

Արտակարգ դատարանները անհամապատասխան են իրավական պետությանը, հետևաբար, ժողովրդավարական պետությունների սահմանադրությաններով, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությամբ (ՀՀ Սահմանադրության 92 հոդված) արգելված է արտակարգ դատարանների ստեղծումը:

ՌԴ Սահմանադրության 118 հոդվածի Կաշեպովի մեկնաբանության մեջ տրվում է արտակարգ դատարանի արգելքի մասին մեկնաբանություն, որի համաձայն ՌԴ արդարադատությունը կարող է իրականացվել միայն օրենքի հիման վրա ստեղծված դատարանների կողմից: Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է: Վաղ ժամանակներում նման դատարանների ստեղծման փորձը չի համապատասխանել օրենքին: Արտակարգ դատարանները ստեղծվել են սահմանադրաիրավական համակարգից դուրս՝ անտեսելով արդարադատության իրականացման ժողովրդավարական սկզբունքները: Արտակարգ դատարանների գործունեությունը որևէ կապ չի ունեցել արդարադատության հետ¹:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 (1) հոդվածում նշվում է. «օրենքի հիման վրա

¹ <http://az-libr.ru/index.htm?Law&Constn/ru/KRF93/krf118>

ստեղծված դատարան» բառակապակցությունը, ինչից հետևություն է արվում, որ դատարանի ստեղծումը չպետք է հակասի տվյալ պետության օրենքին:

Արտակարգ դատարանների հարցին անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանն իր 2 դեկտեմբերի 2008թ. ՍԴՈ-782 որոշմամբ: Տվյալ գործով Սահմանադրական դատարանի հայտնած դիրքորոշումն հիմք ընդունելով՝ կարելի է եզրակացնել, որ որպեսզի դատարանը չհամարվի արտակարգ, այն պետք է լինի որպես առանձին պետական իշխանության մարմին, դատական գործողությունների փաստացի իրավակարգավորումներն ու դրանցից բխող իրավակիրառական պրակտիկան պետք է ապահովի արդարադատության իրականացման սահմանադրական պահանջները, այդ ոլորտում մեր երկրի ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը, դատական պաշտպանության արդյունավետությունը²:

ՀՀ փաստաբանների պալատի
Երիտասարդական խորհրդի անդամ
փաստաբան Տաթևիկ Շալջյան

² <http://concourt.am/armenian/decisions/common/2008/pdf/sdv-782.pdf>